



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«___» _____ 2023 թ.

N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 128-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքաշինության մասին> օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 5.1-
րդ կետերով, <Նորմատիվ իրավական ակտերի մասին> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության
պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի <Բնակելի,
հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի
կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու և Հայաստանի
Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N273-Ն
հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N128-Ն հրամանի հավելվածի.

1) <III.Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների
նախագծման փուլերը> III գլխի աղյուսակ N1-ը լրացնել նոր՝ 8-րդ կետով, հետևյալ
բովանդակությամբ. <8.Ներքին մակերեսների (միջավայրի) ներկառուցված և առանձին
տեղաբաշխվող կահավորանք, գույք և սարքավորումներ (այդ թվում աշխատանքների,
ծառայությունների, խելամիտ հարմարեցումների կազմակերպման ու սպասարկման
տեխնիկական միջոցներ), ինտերյերի գեղարվեստական ձևավորում, հարդարանք՝ ըստ
նախագծային առաջադրանքի և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի:>,

2) <IV.Նախագծային փաստաթղթերի կազմը մեկ և երկու փուլերով մշակման դեպքում> IV գլխի.

ա. աղյուսակ N2-ի <Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ> մասից հետո լրացնել նոր մաս՝ <Ներքին մակերեսների (միջավայրի) ներկառուցված և առանձին տեղաբաշխվող կահավորանք, գույք և սարքավորումներ (այդ թվում աշխատանքների, ծառայությունների, խելամիտ հարմարեցումների կազմակերպման ու սպասարկման տեխնիկական միջոցներ), ինտերյերի գեղարվեստական ձևավորում, հարդարանք, տարածքի համալիր բարեկարգում, սանիտարահիգիենիկ պահանջների ապահովում, շրջակա միջավայրի բարելավում>,

բ. աղյուսակ N3-ի <Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ> 11-րդ կետից հետո լրացնել նոր 11.1 և 11.2 կետեր, հետևյալ բովանդակությամբ, համապատասխանաբար. <11.1 Ներքին մակերեսների (միջավայրի) ներկառուցված և առանձին տեղաբաշխվող կահավորանք, գույք և սարքավորումներ (այդ թվում աշխատանքների, ծառայությունների, խելամիտ հարմարեցումների կազմակերպման ու սպասարկման տեխնիկական միջոցներ), ինտերյերի գեղարվեստական ձևավորում, հարդարանք> և <11.2 Տարածքի համալիր բարեկարգում, սանիտարահիգիենիկ պահանջների ապահովում, շրջակա միջավայրի բարելավում>,

գ. աղյուսակ N5-ը լրացնել նոր՝ 5-րդ և 6-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ, համապատասխանաբար. <5. Ներքին մակերեսների (միջավայրի) կահավորանքի, գույքի և սարքավորումների (այդ թվում աշխատանքների, ծառայությունների, խելամիտ հարմարեցումների կազմակերպման ու սպասարկման տեխնիկական միջոցների) տեղաբաշխման, ինտերյերի գեղարվեստական ձևավորման, հարդարանքի հատակագծային, կոնստրուկտիվ, ինժեներական և ճարտարապետական լուծումներ> և <6. Տարածքի համալիր բարեկարգման, սանիտարահիգիենիկ պահանջների ապահովման, շրջակա միջավայրի բարելավման հատակագծային, կոնստրուկտիվ, ինժեներական և ճարտարապետական լուծումներ>,

դ. 5-րդ բաժնի <3) Ճարտարապետաշինարարական մաս> 3)-րդ ենթաբաժնի <Ճարտարապետական լուծումներ> պարբերության <Տեքստային նյութեր> մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <Տեքստային նյութերը ներառում են՝ նախագծվող օբյեկտի արտաքին և ներքին տեսքերի, նրա ծավալատարածական, հատակագծային և ֆունկցիոնալ լուծումների նկարագիրը և հիմնավորումը, ճարտարապետական հորինվածքի նկարագիրը և հիմնավորումը, հիմնական, օժանդակ, սպասարկման և տեխնիկական նշանակության,

բազմաբնակարան (բազմաֆունկցիոնալ) շենքերի դեպքում նաև՝ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների հարդարման, հատակների, տանիքի, կախովի առաստաղների, միջնորմների, ինչպես նաև հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար կենսագործունեության պայմանների ու շահագործման մատչելիության ապահովմանն ուղղված լուծումների նկարագիրը:»,

ե. 5-րդ բաժնի <3) Ճարտարապետաշինարարական մաս> 3)-րդ ենթաբաժնի <Ճարտարապետական լուծումներ> պարբերության <Գծագրական նյութեր> մասի <ա.> կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <շենքերի, շինությունների հարկաբաժինների հատակագծերը (այդ թվում՝ նկուղի, որմնախարսխային հատվածի, տեխնիկական ընդհատակի, տեխնիկական հարկի, ձեղնահարկի, բազմաբնակարան (բազմաֆունկցիոնալ) շենքերի դեպքում նաև՝ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների), հարաչափերի (մակերեսների) և դրանց գործառնական նշանակության նշումով (սենքերի մասնագրերը),>»,

զ. 5-րդ բաժնի <3) Ճարտարապետաշինարարական մաս> 3)-րդ ենթաբաժինը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ՝ **<Ներքին մակերեսների (միջավայրի) կահավորանքի, գույքի և սարքավորումների (այդ թվում աշխատանքների, ծառայությունների, խելամիտ հարմարեցումների կազմակերպման ու սպասարկման տեխնիկական միջոցների) տեղաբաշխման, ինտերյերի գեղարվեստական ձևավորման, հարդարանքի հատակագծային, կոնստրուկտիվ, ինժեներական և ճարտարապետական լուծումներ**

Բաժինը մշակվում է տեխնիկական և նախագծային առաջադրանքների առկայությամբ՝ օբյեկտների գործառնական նշանակության, դրանց ներքին միջավայրին բնորոշ առանձնահատկությունների ու պահանջվող տեխնոլոգիական, կոնստրուկտիվ, ինժեներական ու ճարտարապետական լուծումների հաշվառմամբ՝ բազմաֆունկցիոնալ բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների նախագծման, կիրառելի է որպես պարտադիր պահանջ կրթական, առողջապահական, մարզական ու սոցիալական նշանակության օբյեկտների դեպքում և ընդգրկում է՝

Տեքստային նյութեր՝

Տեքստային նյութերը ներառում են՝ օբյեկտների ներքին մակերեսների (միջավայրի) կահավորանքի, գույքի և սարքավորումների (այդ թվում աշխատանքների, ծառայությունների, հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների, մատչելիության համընդհանուր դիզայնի կազմակերպման ու

սպասարկման տեխնիկական միջոցների) տեղաբաշխման, ինտերյերի գեղարվեստական ձևավորման, հարդարանքի, շահագործման անվտանգության հատակագծային, կոնստրուկտիվ, ինժեներական և ճարտարապետական լուծումների նկարագիրը, նախատեսվող գույքի, կահավորանքի, սարքավորումների, հարդարանքի ձեռքբերման պայմանները, հիմնավորումը և համապատասխանությունը նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, սանիտարական նորմերի ու օրենսդրության պահանջներին:

Գծագրական նյութեր՝

ա. կահավորանքի, գույքի և սարքավորումների, խելամիտ հարմարեցումների, մատչելիության համընդհանուր դիզայնի կազմակերպման ու սպասարկման տեխնիկական միջոցների մասնագրերը (գույքի, կահավորանքի գծագրերը հարաչափերով, շինանյութերի, հարդարման նյութերի ու սարքավորումների ցանկը և մակնշումը, երաշխիքային ժամկետները), տեղաբաշխումն ըստ հարկաբաժինների:>:

X

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
11-Ի N 128-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԻ
ՆԱԽԱԳԾԻ

1. Անհրաժեշտությունը

Նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ վարչապետի 2022 թվականի նոյեմբերի 18-ի N02/12.21/37982-2022 հանձնարարականի կատարման անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Կարևորելով ՀՀ տարածքում կառուցվող /վերակառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում մատչելիության խնդիրների) շահագործման բավարար պայմանների ապահովման պահանջը, դրանց ներքին միջավայրի (մակերեսների) արդիական ձևավորումը, համալրումը անհրաժեշտ գույքով, կահավորանքով, տեխնիկական սարքերով և սարքավորանքով, անվտանգությունն ու հուսալիությունը հատկապես հրատապ է համարվում հասարակական նշանակության՝ նախադպրոցական, դպրոցական, բարձրագույն ուսումնական հաստատությունների, առողջապահական ու մարզական կազմակերպությունների մասով անհրաժեշտ պահանջների ապահովումը՝ նախագծային առաջադրանքների մշակումից մինչև ծրագրի իրագործում:

Հարկ է նշել, որ ՀՀ տարածքում գործում են մի շարք նորմատիվ ակտեր, որոնք ուղղակիորեն կապված են տվյալ խնդիրների կարգավորման հետ:

Մասնավորապես, դիտարժան են.

1. ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N12-Ն հրամանով հաստատված <Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ> N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը,

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N25-Ն հրամանով հաստատված ՀՀՀՇՆ 31-03.04-2022 <Նախադպրոցական հաստատությունների շենքեր. Նախագծման նորմեր> շինարարական նորմերը,
3. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N103-Ն հրամանով հաստատված ՀՀՀՇՆ31-03.01-2014 <Հանրակրթական նշանակության շենքեր> շինարարական նորմերը,
4. ՀՀ քաղաքաշինության նախագահի կոմիտեի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N95-Ն հրամանով հաստատված ՀՀՀՇՆ 31-03-«Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը,
5. ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N857 հրամանով հաստատված <Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)> N 2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները և այլն:

Ներկայումս, ՀՀ տարածքում կառուցվող և վերակառուցվող հասարակական շենքերի ու շինությունների գերակշիռ մասն իրականացվում է պետական պատվիրատուների կողմից՝ դիտարկելով մեծ մասամբ միայն շենքային պայմանների բարելավումը՝ առանց կահավորման և գույքի ձեռքբերման, դրանց տեղաբաշխման խնդիրների:

Նախագծով նախատեսվող խնդիրները մասամբ լուծում են գտնում վարկային միջոցներով իրականացվող ծրագրերի շրջանակներում: Պետական բյուջեի միջոցներով իրականացվող աշխատանքների համար խիստ կարևորվում են օրենսդրական մասնակի անհամապատասխանությունների շտկումը, որոնց առկայությամբ հստակ և պարտադիր պահանջներ չեն սահմանվում շենքերի և շինությունների շահագործման բավարար պայմանների ապահովման, դրանց ներքին միջավայրի (մակերեսների) արդիական ձևավորման, անհրաժեշտ գույքով, կահավորանքով, տեխնիկական սարքերով և սարքավորանքով համալրման համար:

2.1 Առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը, Կոմիտեն նախաձեռնել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանում լրացումներ կատարելու

գործընթաց, որի շրջանակներում նշված հրամանի տարբեր աղյուսակներում և բաժիններում կատարվել է լրացում նախագծային փաթեթի կազմում նախատեսվող ներքին մակերեսների (միջավայրի) ներկառուցված և առանձին տեղաբաշխվող կահավորանքի, գույքի և սարքավորումների (այդ թվում աշխատանքների, ծառայությունների, խելամիտ հարմարեցումների կազմակերպման ու սպասարկման տեխնիկական միջոցների), ինտերյերի գեղարվեստական ձևավորման, հարդարանքի, ինչպես նաև տարածքի համալիր բարեկարգման, շրջակա միջավայրի բարելավման միջոցառումների նախագծային և նախահաշվային փաստաթղթերի մշակման մասով:

Տարիների փորձից ելնելով ակնհայտ է դառնում, որ հասարակական նշանակության շենքի կառուցման ժամանակահատվածքում միայն շինմոնտաժային աշխատանքների ապահովումը բավարար պայման չէ արդիական, մատչելի, շահագործման համար հուսալի ներքին և արտաքին գրավիչ միջավայր ձևավորելու համար, հատկապես եթե խնդիրները վերաբերում են կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտներին:

Ուստի, կարգավորումը գնահատվում է, որպես հրատապ:

ՀՀ կադաստրի կոմիտեի առաջարկի համաձայն՝ Նախագծի լրամշակված տարբերակում քաղաքաշինական օբյեկտների կահավորանքին վերաբերող կարգավորումներից բացի, նախատեսվել է դրույթ՝ մասնավորապես, բազմաբնակարան շենքերի նախագծային փաստաթղթերում ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների մասով գծագրական և տեքստային նյութերի ներկայացման պահանջ, որը գնահատվել է, որպես իրատեսական:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ աշխատանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին> ՀՀ աշխատանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագծի ընդունմամբ՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում որոշակի փոփոխություններ կարող են

նախատեսվել՝ առաջիկայում նախագծման ենթակա օբյեկտների նախահաշվային արժեքների աճի արդյունքում:

2.2 Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշում

Կետ 2.7՝ <շարունակել քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց հանդիսացող նորմատիվ փաստաթղթերի մշակումն ու շարունակական արդիականացումը>

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1902-Ն որոշում

Կետ 3.1 (միջոցառումների ծրագիր)՝ <Առնվազն 500 մանկապարտեզի և նախակրթարանի կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման համար հաստատությունների՝ ցանկում ընդգրկման չափանիշների և մեթոդաբանության մշակում >

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին> N531-Լ որոշում

Հավելված 1, Կետ 68՝ <Միաժամանակ, արդյունքային ցուցանիշների բարելավման նպատակով՝ նախկինում իրականացված շինարարական ծրագրերի վերլուծության հիման վրա, նպատակահարմար է սահմանել և ձևավորել հասարակական նշանակության շենքերի ու շինությունների՝ մասնավորապես հանրակրթական, առողջապահական և սպորտային հաստատությունների շինարարական ծրագրերում օգտագործվող հիմնական հարդարման նյութերին ներկայացվող պարտադիր նվազագույն տեխնիկական ու երաշխիքային պահանջներ, կազմել միանման բնութագրեր:>:

Կետ 6.1 (միջոցառումների ծրագիր)՝ <Քաղաքաշինության բնագավառում կառավարման գործառույթների արդյունավետության բարձրացում, միջազգայնորեն ընդունված սկզբունքներին ներդաշնակեցված իրավական դաշտի կազմավորում>:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից

4. Ակնկալվող արդյունքը

Քաղաքաշինական ծրագրերի արդյունավետության, ծրագրից ակնկալվող արդյունքային ցուցանիշների՝ նոր կառուցվող և վերակառուցվող օբյեկտների շահագործման արդի և բավարար պահանջների (կահավորման, տեխնիկական սարքերով համալրման և այլն) ապահովում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 128-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>
ՀՀ ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ
ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին> Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը տեղադրված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի www.minurban.am և իրավական ակտերի նախագծերի հրապարակման e-draft.am կայքերում:

2. Հասարակության մասնակցությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին> Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագծի վերաբերյալ առաջարկություններ դեռ չեն ներկայացվել: